ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«13» փետրվար 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-93/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.04.2016թ. թիվ 1/73-3/13132-16 և 06.05.2016թ. թիվ 1/73-3/13675-16 գրություններով ներկայացված «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, 29.04.2016թ. թիվ 1/73-3/13132-16 և 06.05.2016թ. թիվ 1/73-3/13675-16 գրություններով, դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Էլիտ ֆուդ»

ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Վերոհիշյալ գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության 19.04.2016թ. թիվ ԴՎԱ/1013 և 03.05.2016թ. թիվ ԴՎԱ/1170 գրությունները և կից փաստաթղթերի պատճենները:

2. «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 05.05.2016թ. թիվ 01/04.1/1769-16 և 12.05.2016թ. թիվ 01/04.1/1837-16 գրություններով դիմել է «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ին:

Ի պատասխան Կենտրոնի 12.05.2016թ. թիվ 01/04.1/1837-16 գրության՝ Ընկերությունը 01.11.2016թ. գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/15 ծածկագրով շրջանակայինն համաձայնագրերով գնման ընթացակարգի հայտերի բացման արդյունքում «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը գնային առաջարկից պակաս լինելու վերաբերյալ անհրաժեշտություն կա տեղեկատվության կրկնակի ճշտման, քանի որ «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ն «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/15» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը թվով 2 չափաբաժինների համար կազմել է՝ 386 316 000 ՀՀ դրամ (1-ին չափաբաժին՝ 290 628 000 ՀՀ դրամ), (2-րդ չափաբաժին՝ 95 688 000 ՀՀ դրամ):

Ընկերությունը վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ Ընկերության երեք հաշվետու տարիների (2013թ., 2014թ. և 2015թ.) համախառն եկամտի հանրագումարը կազմել է 355 791 538 ՀՀ դրամ, որից՝

1. 2013թ.- 0 դրամ:
2. 2014թ. - ընդամենը համախառն եկամուտ՝ 10 482 528 ՀՀ դրամ:
3. 2015թ. - ընդամենը համախառն եկամուտ՝ 345 309 010 ՀՀ դրամ:

«Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 05.12.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-93/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ

ՀՀ պաշտպանության նախարարությունը 19.04.2016թ. թիվ ԴՎԱ/1013 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/5» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Միևնույն ժամանակ, Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման նպատակով վերջինս հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն, որին ի պատասխան ստացվել է եզրակացություն, որի համաձայն՝ «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի գնային առաջարկը գերազանցել է հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը, ինչի հիման վրա էլ «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Պատվիրատու 1-ը, պատշաճ ծանուցված լինելով 05.12.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-93/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ

ՀՀ պաշտպանության նախարարությունը 03.05.2016թ. թիվ ԴՎԱ/1170 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/15» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Միևնույն ժամանակ, Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման նպատակով վերջինս հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն, որին ի պատասխան ստացվել է

եզրակացություն, որի համաձայն՝ «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի գնային առաջարկը գերազանցել է հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը, ինչի հիման վրա էլ «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Պատվիրատու 2-ը, պատշաճ ծանուցված լինելով 05.12.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-93/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. <u>ՍՑ-ԳԲԽ-93/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 19.04.2016թ. թիվ 1/73-3/13132-16 և 06.05.2016թ. թիվ 1/73-3/13675-16 գրություններով ներկայացված «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. *ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ*

□ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) մասնակցելու նպատակով «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ն ***24.12.2015թ.*** հայտ է ներկայացրել:

□Ընկերությունը հայտի N 3.3 հավելվածի «ա» կետով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

□Ընկերությունը հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը թվով 8 չափաբաժինների համար կազմել է՝ 904 424 436 ՀՀ դրամ (1-ին չափաբաժին՝ 156 967 902 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժին՝ 278 716 617 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժին՝ 73 774 800 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժին՝ 260 032 572 ՀՀ դրամ, 5-րդ

չափաբաժին՝ 37 498 950 ՀՀ դրամ, 6-րդ չափաբաժին՝ 35 748 999 ՀՀ դրամ, 7-րդ չափաբաժին՝ 31 972 644 ՀՀ դրամ, 8-րդ չափաբաժին՝ 29 711 952 ՀՀ դրամ):

Պատվիրատու 1-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 20.01.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 1-ին 22.01.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի ***հայտը ներկայացնելուն (24.12.2015թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը (2012թ., 2013թ., 2014թ.) կազմել է 8 735 441 ՀՀ դրամ:***

Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 26.01.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

2. *ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ*

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 21) մասնակցելու նպատակով «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ն ***07.01.2016թ.*** հայտ է ներկայացրել:

Ընկերությունը հայտի N 3.3 հավելվածի «ա» կետով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

Ընկերությունը հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը թվով 2 չափաբաժինների համար կազմել է՝ 386 316 000 ՀՀ դրամ (1-ին չափաբաժին՝ 290 628 000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժին՝ 95 688 000 ՀՀ դրամ):

Պատվիրատու 2-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով

նախատեսված տվյալների ճշտման մասին 15.01.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

 Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին 19.01.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի ***հայտը ներկայացնելուն (07.01.2016թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը (2012թ., 2013թ., 2014թ.) կազմել է 8 735 441 ՀՀ դրամ:***

 Ընկերությունը Կենտրոնին ուղղված 01.11.2016թ. թիվ 09/8852-16 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի հայտերի բացման արդյունքում «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը գնային առաջարկից պակաս լինելու վերաբերյալ անհրաժեշտություն կա տեղեկատվության կրկնակի ճշտման, քանի որ Ընկերության 2014թ. համախառն եկամուտը կազմում է 10,482,528 ՀՀ դրամ, իսկ 2015թ. համախառն եկամուտը՝ 345,309,010 ՀՀ դրամ:

 Կենտրոնը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված 02.11.2016թ. թիվ 01/04.1/3978-16 գրությամբ խնդրել է հայտնել «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն (2016թ.) նախորդող երեք հաշվետու տարիների (2013թ., 2014թ., 2015թ.) համախառն եկամտի հանրագումարը:

 ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն Կենտրոնին ուղղված 21.11.2016թ. թիվ 1/6-1/35661-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում ***«Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն (2016թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը (2013թ., 2014թ., 2015թ.) կազմում է 296,642,420, որը պակաս չէ Ընկերության ներկայացրած գնային առաջարկից:***

6. <u>ՍՑ-ԳԲԽ-93/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության 19.04.2016թ. թիվ ԴՎԱ/1013

գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 03.05.2016թ. թիվ ԴՎԱ/1170 գրությունը և կից փաստաթղթերը՝ հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: ***Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:***

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ***գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն

կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից **հայտը ներկայացվելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:**

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) մասնակցելու նպատակով «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ն ***24.12.2015թ.*** հայտ է ներկայացրել:

Ընկերությունը հայտի N 3.3 հավելվածի «ա» կետով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

Ընկերությունը հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը թվով 8 չափաբաժինների համար կազմել է՝ 904 424 436 ՀՀ դրամ (1-ին չափաբաժին՝ 156 967 902 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժին՝ 278 716 617 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժին՝ 73 774 800 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժին՝ 260 032 572 ՀՀ դրամ, 5-րդ չափաբաժին՝ 37 498 950 ՀՀ դրամ, 6-րդ չափաբաժին՝ 35 748 999 ՀՀ դրամ, 7-րդ չափաբաժին՝ 31 972 644 ՀՀ դրամ, 8-րդ չափաբաժին՝ 29 711 952 ՀՀ դրամ):

Այսպիսով, Ընկերության կողմից առավելագույն գնային առաջարկը ներկայացվել է 2-րդ չափաբաժնով, որի գումարը կազմել է ***278 716 617 ՀՀ դրամ***:

Մինչդեռ, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.01.2016թ. Պատվիրատու 1-ին տրամադրված եզրակացության համաձայն՝ «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի ***հայտը ներկայացնելուն (24.12.2015թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը (2012թ., 2013թ., 2014թ.) կազմել է <u>8 735 441</u> ՀՀ դրամ, այսինքն՝ «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի գնային առաջարկը*** (2-րդ չափաբաժնով ներկայացրած առավելագույն գնային առաջարկի համեմատությամբ***) գերազանցել է հայտը ներկայացնելուն նախորդող երեք տարիների համախառն եկամտի հանրագումարը:***

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի կողմից ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում 24.12.2015թ. հայտի N 3.3 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է Օրենքի 5-րդ 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնան գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 07.01.2016թ. հայտ է ներկայացրել «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի N 3.3 հավելվածի «ա» կետով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է,

որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

Ընկերությունը հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը թվով 2 չափաբաժինների համար կազմել է՝ 386 316 000 ՀՀ դրամ (1-ին չափաբաժին՝ 290 628 000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժին՝ 95 688 000 ՀՀ դրամ):

Մինչդեռ, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.01.2016թ. Պատվիրատու 2-ին տրամադրված եզրակացության համաձայն՝ «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի ***հայտը ներկայացնելուն (07.01.2016թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը (2012թ., 2013թ., 2014թ.) կազմել է 8 735 441 ՀՀ դրամ:***

Ընկերությունը Կենտրոնին ուղղված 01.11.2016թ. թիվ 09/8852-16 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի հայտերի բացման արդյունքում «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը գնային առաջարկից պակաս լինելու վերաբերյալ անհրաժեշտություն կա տեղեկատվության կրկնակի ճշտման, քանի որ Ընկերության 2014թ. համախառն եկամուտը կազմում է 10,482,528 ՀՀ դրամ, իսկ 2015թ. համախառն եկամուտը՝ 345,309,010 ՀՀ դրամ:

Կենտրոնը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված 02.11.2016թ. թիվ 01/04.1/3978-16 գրությամբ խնդրել է հայտնել «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն (2016թ.) նախորդող երեք հաշվետու տարիների (2013թ., 2014թ., 2015թ.) համախառն եկամտի հանրագումարը:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն Կենտրոնին ուղղված 21.11.2016թ. թիվ 1/6-1/35661-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում ***«Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն (2016թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը (2013թ., 2014թ., 2015թ.) կազմում է 296,642,420, որը պակաս չէ Ընկերության ներկայացրած գնային առաջարկից:***

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում 07.01.2016թ. հայտի N 3.3 հավելվածով ներկայացված հայտարարությունը չի հանդիսանում է Օրենքի 5-րդ 1-ին մասի 4-րդ կետի

«բ» ենթակետով նախատեսված գնան գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Անհրաժեշտ է նշել, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

□*նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*

□ *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերությանը ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Կենտրոնն արձանագրում է, որ «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը ***24.12.2015թ***. մասնակցելով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/5» ծածկագրով շրջանակային համա- ձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում, այնուհետև ***07.01.2016թ.*** կրկին հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով,*** եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի

լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ ***որակավորման չափանիշները*** կամ տեխնիկական բնութագրերը ***որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:***

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 29.04.2016թ. թիվ 1/73-3/13132-16 և 06.05.2016թ. թիվ 1/73-3/13675-16 գրություններով ներկայացված «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00119157) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ93/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Գևորգյան